ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<06>> նոյեմբերի 2020թ. N ՄՊ/434-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ՆՄՈ/02-2020 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2020 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 15/1172 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հունվարի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> ՆՄՈ/02-2020 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի <<1.1.1, 1.3.1, 9.1.1, 9.1.2, 9.2.1, 9.3.1, 9.3.3, 9.3.4, 9.3.5, 9.3.6, 9.4.1, 1, 10 և 11>> կետերում նշված միջոցառումները

   կասեցնել և նախատեսված միջոցառումների անցկացումը ներառել 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.11.2020 20:39:28 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230